



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2011թ. N370-Ա

ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. դեկտեմբերի 5-ի N1194 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի պահանջները.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների 2010 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ստացված զուտ շահույթից պետական բյուջե շահութաբաժինների վճարման չափերը.

1) «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն – 2286500 /երկու միլիոն երկու հարյուր ութանասունվեց հազար հինգ հարյուր/ դրամ,

2) «Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերություն – 1166500 /մեկ միլիոն հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր/ դրամ,

3) «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերություն – 951100 /ինը հարյուր հիսունմեկ հազար հարյուր/ դրամ,

4) «Հրազդանի մարզային արյան բանկ» պետական փակ բաժնետիրական ընկերություն – 125000 /մեկ հարյուր քսանհինգ հազար/ դրամ,

5) «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն – 35000 /երեսունհինգ հազար/ դրամ,

6) «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն – 12000 /տասներկու հազար/ դրամ,

7) «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն – 6100 /վեց հազար հարյուր/ դրամ:

Շահութաբաժնի գծով ընկերությունների վերը նշված պարտավորությունները սահմանված կարգով (ոչ ուշ, քան մինչև 2011թ. հոկտեմբերի 1-ը) ենթակա են վճարման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200416 հաշվին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ